ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի նոյեմբերի 5-8-ը
Ֆիլիպինների Հանրապետություն (ք. Մանիլա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ներսես Զեյնալյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ֆիլիպինների Հանրապետություն, քաղաք Մանիլա, նոյեմբերի 5-8-ը

3. Հրավիրող կողմը՝

Ասիական զարգացման բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն Ասիական զարգացման բանկի կողմից հիմնադրված Ասիական-խաղաղօվկիանոսյան հարկային կենտրոնի 2-րդ ամենամյա տարածաշրջանային բարձրաստիճան հարկային համաժողովին: Տարածաշրջանային հարկային բարձրաստիճան համաժողովը մասնակիցների համար հանդիսանում է հարթակ՝

1. ներքին ռեսուրսների մոբիլիզացման և միջազգային հարկային համագործակցության նոր և առաջնահերթ ոլորտների վերաբերյալ ռազմավարական երկխոսություններ վարելու, ինչպես նաև միջազգային հարկային ֆորումների վերջին նորություններին ծանոթանալու համար.
2. հարկային վարչարարության լավագույն փորձն և հարկային բարեփոխումների ապահովման համար արդյունավետ ռազմավարություններն ուսումնասիրելու համար.
3. հարկային վարչարարության կարողությունների հզորացման հարցում երկրի հատուկ փորձը ներկայացնելու համար:

Նշյալ հարթակը տարածաշրջանում հարկային համագործակցության խոշորագույն հարթակներից է, այն կարևոր դեր է խաղում ագրեսիվ հարկային պլանավորման նպատակով շահագործվող հարկային բացերը փակելուն և հարկումից խուսափման դեմ պայքարելուն միտված տարածաշրջանի զարգացող երկրների ջանքերը միավորելու գործում:

Միջոցառմանը մասնակցել են ԱԶԲ անդամ երկրների հարկային քաղաքականության և վարչարարության համար պատասխանատու մարմինների ղեկավարներ և միջազգային կազմակերպությունների (ՀԲ, ԱՄՀ, ՏՀԶԿ) բարձրաստիճան ներկայացուցիչներ:

5. Քննարկված թեմաները՝

Տարածաշրջանային հարկային բարձրաստիճան համաժողովի ընթացքում քննարկվել են հարկային քաղաքականության արդիական հարցեր, այդ թվում.

- հարկային ծախսերի և արտոնությունների, ավելացված արժեքի հարկի և գույքահարկի վարչարարման ընթացիկ զարգացումները և առաջիկա ծրագրերը,
- համաշխարհային հարկային նախաձեռնությունների իրագործման ընթացքը տարածաշրջանի երկրներում, ներառյալ՝ ՏՀԶԿ ԲԵՊՍ ծրագրի երկսյուն լուծումը, հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման ստանդարտների ներդրումը,
- հարկային կարգապահության ռիսկերի կառավարման, հարկային վարչարարական գործընթացների թվայնացման, հարկ վճարողների սպասարկման բարելավման ոլորտներում առկա խնդիրները և դրանց հնարավոր լուծումները,
- կլիմայի փոփոխության առաջացրած ֆիսկալային ռիսկերը և գենդերային անհավասարության ազդեցությունը հարկման վրա:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Միջոցառման ընթացքում ՊԵԿ պատվիրակը հանդիպում է ունեցել ԱԶԲ ներկայացուցիչների հետ՝ քննարկելով Հայաստանում ՏՀԶԿ տեղեկությունների ավտամատ փոխանակման ստանդարտի (Միասնական հաշվետվական ստանդարտի) ներդրման ընթացքը և քննարկելով այդ գործում ԱԶԲ-ի հնարավոր հետագա աջակցության ուղղությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն կայացվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հաշվի առնելով միջոցառման կարևորությունը տարածաշրջանի երկրների հարկային ոլորտում ունեցած փորձին և ծրագրերին ծանոթանալու առումով՝ կարևորվում է մասնակցությունը հետագա միջոցառումներին: Հաշվի առնելով ԱԶԲ ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքները և դրական արձագանքները՝ առաջարկվում է հանդես գալ ԱԶԲ-ի Հայաստանի ներկայացուցչության առջև՝ ՀՀ-ում Միասնական հաշվետվողական ստանդարտի ներդրման համար SS լուծումների մշակմանը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու առաջարկությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

13.11.2023թ.